

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ «Նվիրաբերող»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Ստեփանյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի 2002 թ-ի մայիսի 2-ի N726-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ (այսուհետ՝ «Նվիրաբերություն ստացող»)՝ ի դեմս տնօրեն Արա Իսպիրյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2004թ-ի ապրիլի 14-ի N586-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր)՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժնի 06 խմբի 01 դասի «16. Գնահատման և թեստավորման ծառայություններ» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

- 1.1 Սույն պայմանագրով Նվիրաբերություն ստացողը պարտավորվում է կատարել սույն պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, իսկ Նվիրաբերողը պարտավորվում է վճարել այդ աշխատանքների համար:
- 1.2 Նվիրաբերություն ստացողը պարտավորվում է կատարել հետևյալ աշխատանքները.
  - 1. Ազգային ստուգատեսի նախապատրաստական գործընթաց
  - 2. Պետական ավարտական և միասնական քննությունների նախապատրաստական գործընթաց:
  - 3. Հիմնական դպրոցի ավարտական քննությունների նախապատրաստական գործընթաց:
  - 4. Ներբուհական և կենտրոնացված քննությունների նախապատրաստական գործընթաց:
  - 5. ԲՈւՀ-երի ընդունելության մրցույթի նախապատրաստական գործընթաց:
  - 6. Արտաքին ընթացիկ գնահատման նախապատրաստական գործընթաց:
  - 7. TIMSS/PIRLS միջազգային ստուգատեսի նախապատրաստական գործընթաց:
  - 8. Ազգային ստուգատեսի անցկացում:
  - 9. Պետական ավարտական և միասնական քննությունների անցկացում:
  - 10. Հիմնական դպրոցի ավարտական քննությունների անցկացում:
  - 11. Ներբուհական և կենտրոնացված քննությունների անցկացում:
  - 12. ԲՈւՀ-երի ընդունելության մրցույթի անցկացում:
  - 13. Արտաքին ընթացիկ գնահատման անցկացում:
  - 14. Քննական աշխատանքների համակարգչային ստուգում, վերլուծությունների և արդյունքների ամփոփում:
  - 15. Ազգային ստուգատեսի և արտաքին ընթացիկ գնահատման աշխատանքների ստուգում, վերլուծությունների և արդյունքների ամփոփում:
  - 16. TIMSS/PIRLS միջազգային ստուգատեսի աշխատանքների ստուգում, վերլուծությունների և արդյունքների ամփոփում:
  - 17. Պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցների մշակում և տպագրում:
- 1.3 Աշխատանքները պատշաճ որակով կատարված են համարվում սույն պայմանագրի հավելված N1-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան Նվիրաբերություն ստացողի կողմից 30 աշխատանքային օրվա ընթացքում դրանց վերաբերյալ առարկություններ չներկայացվելու դեպքում:
- 1.4 Ներկայացնել Նվիրաբերողին սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող Նվիրաբերություն ստացողի 2018 թվականի կատարվելիք միջոցառումների ցանկը համաձայն հավելված N2-ի :

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**2.1 Նվիրաբերողն իրավունք ունի՝**

- 2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Նվիրաբերություն ստացողի կողմից կատարված աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրաբերություն ստացողի գործունեությանը:

- 2.1.2 Առանց աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Նվիրաբերությունը ստացողի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սահմանված պահանջներին կամ եթե աշխատանքների իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու:
- 2.1.3 Մինչև աշխատանքի արդյունքը Նվիրաբերողին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նվիրաբերությունը ստացողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

**2.2 Նվիրաբերողը պարտավոր է՝**

- 2.2.1 Քննարկել և ընդունել պատշաճ կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ քան թերությունները հայտնաբերելուց 15 օր հետո, գրավոր հայտնել Նվիրաբերությունը ստացողին:
- 2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Նվիրաբերությունը ստացողին վճարել սույն պայմանագրի 4.1 կետում նշված աշխատանքների գինը 4.2 կետով սահմանված կարգով:

**2.3 Նվիրաբերություն ստացողն իրավունք ունի՝**

- 2.3.1 Մինչև աշխատանքի արդյունքը Նվիրաբերողին ներկայացնելը, Նվիրաբերողի կողմից սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Նվիրաբերողից պահանջել վճարելու կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:
- 2.3.2 Մինչև աշխատանքի արդյունքը Նվիրաբերողին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նվիրաբերողին:

**2.4 Նվիրաբերություն ստացողը պարտավոր է՝**

- 2.4.1 Իրականացնել աշխատանքի պատշաճ կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ և սույն պայմանագրով:
- 2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Նվիրաբերողին պատճառած վնասները:
- 2.4.3 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:
- 2.4.4 Նվիրաբերողի պահանջով ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:
- 2.4.5 Անձամբ կատարել աշխատանքները:
- 2.4.6 Նվիրաբերողի պահանջով նրան հաղորդել Աշխատանքների կատարման ընթացքի մասին բոլոր տեղեկությունները:

**3. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը**

- 3.1 Նվիրաբերություն ստացողը աշխատանքի կատարման մասին հաշվետվությունները ներկայացնում է յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, տարեկան հաշվետվությունները, մինչև հաջորդող տարվա փետրվարի 1-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. ապրիլի 1-ի N176-Գ, ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թ-ի փետրվարի 4-ի N104-Գ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի N324-Ն հրամանների ձևերին համապատասխան:

**4. Պայմանագրի գինը և վճարման կարգը**

- 4.1 Սույն պայմանագրով կատարված աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 371328400 (երեք հարյուր յոթանասունմեկ միլիոն երեք հարյուր քսանութ հազար չորս հարյուր ) ՀՀ դրամ:
- 4.2 Նվիրաբերողը կատարված աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Նվիրաբերություն ստացողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության 2018թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին որոշման համաձայն՝ ամսական կտրվածքով ոչ ուշ քան տվյալ ամսվա 10-ը, բացառությամբ հունվար ամսվա սահմանված գումարի, որը կփոխանցվի մինը 2018թ հունվարի 31-ը:

**5. Կողմերի պատասխանատվությունը**

- 5.1 Նվիրաբերություն ստացողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի համար:

- 5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում Նվիրաբերությունն ստացողից զանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի 0.05%-ի չափով:
- 5.3 Սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանք կատարելու արդյունքում Նվիրաբերությունն ստացողին վճարման ենթակա գումարներից:
- 5.4 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. Եզրափակիչ դրույթներ

- 7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարման ավարտը:
- 7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 7.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
- 7.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### «Նվիրաբերող»

ՀՀ կառավարության աշխատակազմ  
 Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ  
 կառավարական N1 շենք  
 ՀՎՀՀ՝ 02505554  
 ՀՀ ֆին. նախ. գործառնական վարչություն  
 հ/հ՝ 900011022457

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար՝



Վ. Ստեփանյան

### «Նվիրաբերություն ստացող»

«Գնահատման և թեստավորման կենտրոն»  
 ՊՈԱԿ  
 Հասցե՝ ք. Երևան, Այգեստան 9/4  
 ՀՎՀՀ՝ 01551257  
 հ/հ՝ 1510002596150100  
 Արարատյանի ԲԲԸ



Տիգրան

Կ. Ստեփանյան